Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԵՎ ՄԱՐԶՊԵՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի 2024 թվականի գլխավոր ուղղությունների հիմքում դրված հիմնախնդիրների լուծումը նպատակաուղղված է եղել ՀՀ կառավարության տարածքային քաղաքականության իրականացման բնագավառներում ՀՀ օրենսդրությամբ մարզպետին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացմանը, այդ համատեքստում մարզի բնակչության բարեկեցության բարելավմանը, մարզի զարգացման համար սոցիալ-տնտեսական նպաստավոր նախադրյալների ստեղծմանը, ինչպես նաև տարածքային կառավարման համակարգի արդյունավետության ապահովման համար պետական կառավարման համակարգի ու մարզի տեղական ինքնակառավարման մարմինների հետ փոխհամաձայնեցված համագործակցությանը, պետական ու համայնքային շահերի ներդաշնակեցմանը և տարածքային կայուն, համաչափ զարգացմանը:

Ընդհանուր առմամբ 2024 թվականի ընթացքում մարզպետի աշխատակազմի գործունեությունը եղել է աշխատաշատ և բովանդակալից: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ գրեթե բոլոր ուղղություններով մեր կողմից ապահովվել է աճ: Սակայն պետք է գիտակցել, որ մարզում երկար ժամկետով կայուն սոցիալ-տնտեսական զարգացում ու ակտիվություն ապահովելը, մարտահրավերներ հաղթահարելը մեծապես կախված է լինելու բարեփոխումների ճկունությունից և մեր աշխատանքի արդյունավետությունից:

Տնտեսության զարգացում

Հաշվետու ժամանակահատվածում տարածքային կառավարման մարմնի կողմից տնտեսական քաղաքականության իրականացման նպատակներն են եղել տնտեսական հնարավորությունների ընդլայնումը, մարդու ստեղծարար ներուժի զարգացումը, բնակչության բարեկեցության աճն ու աղքատության կրճատումը, արտահանումը խթանող պայմանների ապահովումը և գործարար միջավայրի ստեղծումը:

2024թ. Արմավիրի մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները Հայաստանի Հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- գյուղատնտեսություն՝ 23.2%
- շինարարություն՝ 7.9%
- մանրածախ առևտուր՝ 3.7%
- ծառայություններ՝ 1.5%
- արդյունաբերություն՝ 5.8% (2023թ. ցուցանիշ):

Չնայած առկա մարտահրավերներին՝ 2024 թվականը տնտեսական առումով բավականին հարուստ է եղել, մասնավորապես՝

Մարզի գյուղատնտեսական համախառն արտադրանքը 2024թ. կազմել է 222.0 մլրդ. դրամ, որն ավել է նախորդ տարվա ցուցանիշից 7.3%-ով:

Մարզում շինարարության ծավալը 2024թ. կազմել 55.8 մլրդ դրամ, որն ավել է նախորդ տարվա ցուցանիշից 2.4 անգամ:

Մարզում մանրածախ առևտրի շրջանառությունը 2024թ. կազմել է 71.5 մլրդ. դրամ, որն ավել է նախորդ տարվա ցուցանիշից 8.2%-ով:

Մարզում մատուցած ծառայությունների ծավալը 2024թ. կազմել է 53.05 մլրդ. դրամ, որն ավել է նախորդ տարվա ցուցանիշից 9.8%-ով:

Սուբվենցիոն ծրագրեր. Մարզի համայնքների բոլոր բնակավայրերում համաչափ և կայուն զարգացում ապահովելու, բնակչության բարեկեցությունը բարելավելու, բնակավայրերն ավելի հարմարավետ ապրելու և գործելու կենսամիջավայր դարձնելու, ինչպես նաև գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայր ստեղծելու նպատակով հաշվետու ժամանակահատվածում մարզպետի աշխատակազմի ակտիվ մասնացությամբ ապահովվել է համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների տրամադրման գործընթացի բարելավում և շարունակականություն:

2024թ. ընթացքում աջակցություն է ցուցաբերվել համայնքներին՝ ՀՀ կառավարության 16.11.2006թ. N 1708-Ն որոշմամբ սահմանված կարգով համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաներ ստանալու նպատակով հայտերի մշակման, սահմանված կարգով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացման և ծրագրերի իրականացման ողջ ընթացքում, ուշադրության կենտրոնում են եղել նախորդ տարիների չավարտված և շարունակվող սուբվենցիոն ծրագրերը:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ կառավարության որոշումներով ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմին սուբվենցիոն ծրագրերով պետական բյուջեից հատկացումը կազմել է 3.273 մլրդ դրամ, որը նախատեսված է եղել մարզի 7 համայնքների 52 բնակավայրերի 35 ծրագրերի/81 ենթածրագրերի համար: Համայնքապետարաններից ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմ ներկայացված օրենսդրությամբ նախատեսված ծախսը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա 2024թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ կատարվել է պետության մասնաբաժնի ֆինանսավորում՝ շուրջ 3.269 մլրդ դրամ, որի կատարողականը կազմել է՝ 99.9%:

Իրականացվել են 2024 թվականի սուբվենցիայի ամբողջական փաթեթների լրամշակման աշխատանքներ՝ հաշվի առնելով ոլորտային գերատեսչությունների դիտողությունները, արդյունքում միջգերատեսչական հանձնաժողովի նիստերի ընթացքում հավանության են արժանացել թվով 31 ծրագրեր՝ 107 ենթածրագրերով՝ շուրջ 7.8 մլրդ դրամ ընդհանուր արժեքով:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել մարզի Արմավիր, Մեծամոր, Արաքս, Խոյ, Բաղրամյան և Ֆերիկ համայնքներից ստացված 2025թ. սուբվենցիոն ծրագրերի 16 ամբողջական փաթեթ, 86 ենթածրագրերով՝ 7.49 մլրդ դրամ ընդհանուր արժեքով, որից կառավարության մասնաբաժինը կազմել է 3.74 մլրդ դրամ, համայնքային մասնաբաժինը՝ 3.7 մլրդ դրամ, մասնավորի և բնակիչների ներդումը՝ 44.3 մլն դրամ:

Մարզում 2018-2024թթ. իրականացված սուբվենցիոն ծրագրերի աշխարհագրությունն ընդգրկուն է: Տարաբնույթ ծրագրեր են իրականացվել և նախատեսվում է իրականացնել մարզի 8 համայնքների 98 բնակավայրերում:

Ոլորտին վերաբերող տեղեկատվական հոսքերի կառավարում, հաշվետվությունների կազմում. Ապահովվել է ՀՀ կառավարության 18.11.2021թ. N 1902-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության միջոցառումների ծրագրում նախատեսված Վարչապետի նախընտրական խոստումների շրջանակներում տրված հանձնարարականների կատարումը, մասնավորապես՝ ՀՀ Վարչապետի 2021թ. հունիսի 4-17-ը Արմավիրի մարզի բնակավայրեր կատարած հանդիպումների ընթացքում արձանագրված ծրագրերից ավարտվել են 23-ը, ավարտական փուլում է 1 ծրագիր, ընթացքի մեջ է 2 ծրագիր, չի իրականացվել Սելավ-Մաստարա ջրամբարի կառուցում ծրագիրը՝ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով, ներկա պահին իրականացվում են քննարկումներ դոնոր կազմակերպությունների հետ:

Հաշվետու ժամանակահատվածում ուշադրության կենտրոնում է եղել ՀՀ Վարչապետի մոտ 2023թ. ապրիլի 22-ին կայացած՝ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի 2022 թվականի գործունեության հաշվետվության և 2024թ. հուլիսի 26-ին մարզ կատարած այցի շրջանակներում ներկայացված՝ ՀՀ

Արմավիրի մարզպետի աշխատակազմի 2023 թվականի գործունեության արդյունքների վերաբերյալ արձանագրություններով տրված հանձնարարականների կատարումը:

ՀՀ կառավարության 2023թ. հոկտեմբերի 5-ի «Աղետների ռիսկի կառավարման 2023-2030 թվականների ռազմավարությունը և 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 1717-Լ որոշմամբ հաստատված հավելվածի շրջանակներում ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի կողմից, որպես համակատարող, կատարված աշխատանքների վերաբերյալ կազմվել են կիսամյակային և տարեկան հաշվետվություններ, որի արդյունքում հաշվետու ժամանակահատվածում ապահովվել է աղետներին դիմակայության բարձրացման նպատակով նոր գործիքակազմով ու չափորոշիչներով աղետների ռիսկերի գնահատմանը, խոցելիության նվազեցմանն ու կարողությունների բարձրացմանն ուղղված գործընթացների իրականացման մասնակցություն:

Արտաքին կապեր. 2024թ. ընթացքում մարզի տնտեսության զարգացմանը նպաստող ներդրումային հնարավորությունների բացահայտման, մարզում հնարավոր ներդրողների ներգրավման և մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանը նպաստող համատեղ ծրագրեր իրականացնելու նպատակով արտաքին կապերի բնագավառում շարունակվել է համագործակցությունը նախկինում հաստատված կապերով և աշխատանքներ են տարվել համագործակցության նոր կապեր հաստատելու ուղղությամբ, մասնավորապես՝ տարածքային և համայնքային մակարդակներում:

2024թ. ապրիլի 15-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի և Ղազախստանի Հանրապետության Մանգիստաուի մարզերի միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր:

05.08.2024թ. Արմավիրի մարզ է այցելել ԳԴՀ Սաքսոնիա-Անհալթ երկրամասի Նաումբուրգի քաղաքապետ Արմին Մյուլերի գլխավորած պատվիրակությունը, հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել երկկողմ համագործակցության ընթացքին և ընդլայնման հնարավորություններին: Համաձայնություն է տրվել Նաումբուրգի քաղաքապետարանի կողմից ներկայացված՝ Արմավիր և Նաումբուրգ քաղաքների միջև գործընկերության համաձայնագրի նախագծին:

30.07.2024թ. ներկայացվել է Վաղարշապատ համայնքի ղեկավարի դրական դիրքորոշումը Հունգարիայի Սեյկեշֆեհեյրվար քաղաքի և Վաղարշապատ համայնքի միջև ապակենտրոնացված համագործակցության հաստատման և հուշագրի նախագծի վերաբերյալ:

12.09.2024թ. ներկայացվել է Արմավիր համայնքի ղեկավարի դրական դիրքորոշումը Արմավիր և ԱՄՆ Փենսիլվանիա նահանգի Սքրենթոն քույր քաղաքների միջև փոխգործակցության, ինչպես նաև փոխըմբռնման հուշագրի նախագծի վերաբերյալ:

11.12.2024թ. քննարկվել է Արմավիր համայնքի և Իրաքյան Քուրդիստանի Զախոյի շրջանի միջև համագործակցություն սկսելու հարցը:

Եռամսյակային կտրվածքով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն՝ 2022թ. հունիսի 29-30-ը Լիոնում կայացած հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության համաժողովին մասնակից մարզի համայնքների համագործակցության արդյունքում ընթացող ծրագրերի, ձեռք բերված պայմանավորվածությունների ընթացքի վերաբերյալ:

Զբոսաշրջություն. Հաշվետու ժամանակահատվածում մարզպետի աշխատակազմը զբոսաշրջության բնագավառին բնորոշ դինամիկ զարգացումների և արդի մարտահրավերների պայմաններում ձգտելով բարձրացնել մարզի զբոսաշրջային ճանաչելիության և մրցունակության մակարդակը՝ իրականացրել է մարզի ճանաչելիության բարձրացման, օտարերկրյա պետությունների վարչատարածքային և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ակտիվացման գործառույթներ:

Արմավիրի մարզում առկա են բոլոր հնարավորությունները հոգևոր-մշակութային, գյուղական, ագրո և էնո տուրիզմի զարգացման համար՝ զբոսաշրջությունը դարձնելով մարզի տնտեսության զարգացման հիմնական շարժիչ ուժերից մեկը:

Համագործակցելով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի հետ՝ ստեղծվել է մարզի զբոսաշրջային գրավչությունները ներկայացնող եռալեզու սահիկաշար մարզի ճանաչելիությանը միտված տարաբնույթ միջոցառումների ժամանակ օգտագործելու նպատակով:

Ապահովվել է մարզի բոլոր համայնքների մասնակցությունը Երևանի Սիզընս այգում 2024թ. մայիսի 25-26-ը կազմակերպված «Ճանաչիր Հայաստանը» մարզային զբոսաշրջային ցուցահանդեսին: Արմավիրի մարզային տաղավարում երկու օրերի ընթացքում այցելուներին ներկայացվել է մարզի արտադրանքը, ստեղծագործող վարպետների աշխատանքները, մարզի բերք ու բարիքը, հարուստ պատմամշակութային ժառանգությունը: Ցուցահանդեսի ընթացքում անցկացվել են վարպետաց դասեր, այցելուներին հնարավորություն է տրվել մասնակցել որևէ փորձառության, առանձնացված գաստրո տաղավարում պատրաստվել է մարզին բնորոշ ուտեստ:

Թարմացվել է Արմավիրի մարզի զբոսաշրջային ռեսուրսների ու ներուժի վերաբերյալ տեղեկատվությունը:

Մասնավոր հատված. Հաշվետու ժամանակահատվածում գործարար և ներդրումային միջավայրի ակտիվության նպատակով մարզպետի աշխատակազմի ջանքերն ուղղվել են գործարար միջավայրի ճկունության, ենթակառուցվածքների ու ռեսուրսների հասանելիության բարձրացմանը, մարզի տնտեսության զարգացման խթանման համար ներդրումային որոշումների կայացման, տեղական և օտարերկրյա ներդրողների ներգրավման, տնտեսական հնարավորությունների հասանելիության համար տեղեկատվական հենքի ձևավորմանը:

Գործարար ակտիվությունը մարզում բարձրացնելու նպատակով Արմավիրի մարզպետի աշխատակազմը համագործակցել է «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի հետ, համակարգել է ինստիտուցիոնալ հարաբերությունները գործընկեր կառույցների, տեղական ինքնակառավարման մարմինների և մարզի գործարար ներկայացուցիչների հետ: 2024 թվականին ևս իրականացվել են աշխատանքներ նոր ներդրումներ ներգրավելու և գործարար կապերը խթանելու ուղղությամբ:

26.07.2024թ. «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամ է ներկայացվել Արմավիր համայնքի ղեկավարի դրական դիրքորոշումը՝ «Իջևանյան Բեկոն» ՍՊ ընկերության կողմից ներկայացված արդիական տեխնոլոգիաներով հագեցած խոզաբուծարանի հիմնման ներդրումային ծրագրի իրականացման նպատակով Մայիսյան գյուղում համայնքային հողամասերի ուղղակի վաճառքի ձևով ընկերությանն օտարելուն համաձայնություն տալու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ:

ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի կողմից 2024թ. սեպտեմբերի 17-20-ը Երևան քաղաքի «Մերիդիան» էքսպո կենտրոնում կազմակերպված Համաշխարհային հայկական գագաթնաժողովի շրջանակներում սեպտեմբերի 19-ին անցկացվել է մարզային էքսպո, որին Արմավիրի մարզի տաղավարում ներկայացվել է մարզի արտադրանքը, մարզի ներդրումային հնարավորությունների և տեսարժան վայրերի վերաբերյալ տեղեկատվություն:

Ներդրումային ծրագրեր. 08.01.2024թ. բացվել է Արմավիր ԲԿ-ի ինֆեկցիոն բաժանմունքը, որի շինարարական աշխատանքները մեկնարկել են 2022 թվականին, ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 151 մլն դրամ: Արմավիր բժշկական կենտրոնի վերակառուցվող ինֆեկցիոն բաժանմունքի մասնաշենքի մի հատվածում տեղակայվել է նաև հիվանդանոցի շտապօգնության ծառայությունը:

29.01.2024թ. բացվել է Միասնական սոցիալական ծառայության Էջմիածնի տարածքային կենտրոնը: Մարզի Վաղարշապատ, Խոյ, Արաքս, Փարաքար և Ֆերիկ համայնքների շուրջ 150.000 բնակիչ հնարավորություն կունենա աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի բոլոր ծառայություններից օգտվել «մեկ պատուհանի» սկզբունքով: Տարածքային կենտրոնի հիմնանորոգման համար ՀՀ կառավարության և Համաշխարհային բանկի համագործակցությամբ հատկացվել է ավելի քան 222 մլն դրամ:

Բաղրամյան համայնքի Լեռնագոգ բնակավայրում ընթացքի մեջ են 14 առանձնատների և մանկապարտեզի կառուցման աշխատանքները: Առանձնատները նախատեսված են ԼՂ-ից տեղահանված բազմազավակ ընտանիքների համար, իսկ մանկապարտեզը նախատեսված է 120 երեխայի համար: Ծրագրի բյուջեն ավելի քան 720մլն դրամ է, բարեգործական ծրագիրն իրականացնում է Հայաստան համահայկական հիմնադրամը:

2024թ. հուլիսի 3-ին Արմավիր համայնքի Մյասնիկյան բնակավայրում տեղի է ունեցել ՀՀ կառավարության, Համաշխարհային բանկի, ինչպես նաև համայնքի համաֆինանսավորմամբ, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի շրջանակում կառուցված մինիֆուտբոլի, բասկետբոլի և վոլեյբոլի դաշտի բացման արարողությունը: Ծրագրի արժեքը կազմել է 45.6 մլն դրամ:

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի և մարզի համայնքների համաֆինանսավորմամբ Արմավիրի մարզում կառուցվել են արհեստական խոտածածկով մանկապատանեկան ֆուտբոլի 10 դաշտեր՝ ք.Արմավիր, ք.Էջմիածին, ք.Մեծամոր, Դալարիկ, Հացիկ, Սարդարապատ, Նորապատ, Մերձավան, Մրգաստան, Ապագա բնակավայրերում, բացման արարողությունը տեղի է ունեցել 2024թ. հուլիսի 5-ին:

ՀՀ Վարչապետի մասնակցությամբ 2024թ. սեպտեմբերի 30-ին տեղի է ունեցել Արմավիրի համայնքի Մյասնիկյան բնակավայրում «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի (ՔՈԱՖ) նոր Սմարթ կենտրոնի կառուցման հիմնարկեքի և ՔՈԱՖ Սմարթ ավանի առաջին կառույցի՝ Յուրեջյանի անվան Երեխայի և ընտանիքի կենտրոնի բացման արարողությունը:

Արմավիր քաղաքի հրապարակամերձ հատվածում ընթացքի մեջ են ժամանակակից լուծումներով այգու կառուցման աշխատանքները, որն իրականացվում է մասնակցային բյուջետավորման գործընթացի շրջանակներում՝ համայնք-կառավարություն համագործակցությամբ՝ 140.3 մլն դրամ արժեքով:

Արմավիր քաղաքի Հերացի փողոցի 5 հասցեում գտնվող շենքը ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեի հաշվեկշռից տրվել է Արմավիր համայնքին և կառավարություն-համայնք-մասնավոր հատված համագործակցությամբ «Ամրակ »ԲԲԸ-ի կողմից վերակառուցվում են շենքի բնակարանները՝ Սիլիկյան թաղամասի այրված և վթարային դարձած շենքերի բնակիչների համար:

Արմավիր համայնքի Արմավիր քաղաքում կառուցվում է Սրբոց նահատակաց եկեղեցի՝ բարերարի միջոցներով, ծրագիրը նախատեսվում է ավարտել 2025 թվականի տարեվերջին:

«ԱՌՍԹՈՌ» ՍՊԸ-ի միջոցներով 2024թ. մեկնարկել է Արմավիր համայնքի Արմավիր քաղաքում «Նորք» բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցապատման ներդրումային ծրագիրը՝ 31 մլրդ դրամ արժեքով, ծրագրի տևողությունը 5-8 տարի է:

Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքում մասնավոր ներդրումներով ընթացքի մեջ են 2 բնակարանաշինության ծրագրեր, մասնավորապես՝ «Արարատ պարկ» բնակելի թաղամասի թվով 3 բազմաբնակարան շենքերի կառուցման աշխատանքները սկսվել և ընթացքի մեջ են, կառուցվելու է 27 շենք՝ 150 մլն դոլար արժեքով: «Ցենտրալ Ռեզիդենս» բնակելի համալիրի 4 բնակելի շենքերից արդեն իսկ ավարտվել են 2-ի կառուցման աշխատանքները, ծրագրի արժեքը 16 մլն դոլար է և նախատեսվում է ավարտել 2025 թվականին:

Մեծամոր համայնքի Մեծամոր քաղաքում կառուցվում է բնակելի թաղամաս՝ 5 բազմաբնակարան շենք, 3 մլն դոլար արժեքով, ինչպես նաև «Սինեմա թաուն» ընկերության կողմից կառուցվում է «Մեծամոր կինոքաղաք», որը լինելու է տարածաշրջանում առաջին բացօթյա տաղավարային կինոհրապարակը՝ 300 մլն դրամ արժեքով:

Ֆինանսական բնագավառ

Պետական ֆինանսների կառավարման համակարգի ռազմավարական նպատակները հաշվետու ժամանակաշրջանում ուղղված են եղել հանրային կառավարման համակարգի լավագույն արդյունքի և հասարակությանը որակյալ հանրային ծառայությունների մատուցմանը, հանրային կյանքի բարելավմանն ուղղված ծրագրերի իրականացման համար արդյունավետ միջավայրի ստեղծմանը: Տարածքային կառավարման համակարգի արդյունավետությունն ուղղակիորեն կապված է եղել հանրային միջոցների արդյունավետ ծախսման հետ: Ծախսային քաղաքականության արդյունավետության բարձրացման տեսանկյունից հաշվետու ժամանակահատվածում մարզպետի աշխատակազմում ապահովվել է հանրային ֆինանսների նպատակային, խնայողաբար և արդյունավետ օգտագործումը:

ՀՀ Արմավիրի մարզում 2024թ. ընդամենը եկամուտների հավաքագրումը պլանավորվել է 17 388 003,6 հազ. դրամ՝ 2023թ. պլանավորված 14 196 933,4 հազ. դրամի համեմատ: 2024թ. տարեկան կատարողականը 30.12.2024թ. դրությամբ կազմել է 18 199 625,3 հազ. դրամ, նախորդ տարվա 14 656 745,1հազ. դրամի համեմատ: Կատարողականը կազմել է 104.7%, նախորդ տարվա 103,2%-ի համեմատ:

2024թ. մարզի համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրումը պլանավորվել է 4 982 235,5 հազ. դրամ, որը 2023թ. պլանավորված 4,745,402.4 հազ. դրամի համեմատ ավել է պլանավորվել 236 833,1 հազ. դրամով, փաստացի հավաքագրումը 30.12.2024թ. դրությամբ կազմել է 5 618 347,7 հազ. դրամ՝ նախորդ տարվա 5,140,372,1 հազ. դրամի համեմատ: Կատարողականը կազմել է 112,8%, նախորդ տարվա 108.3%-ի համեմատ:

2024թ. ընթացքում ՀՀ Արմավիրի մարզի համայնքներին պետական բյուջեից տրամադրվել է 9 160 127,6 հազ. դրամ դոտացիա, որն ամբողջությամբ հատկացվել է համայնքներին: Աջակցություն է ցուցաբերվել մարզի տեղական ինքնակառավարման մարմիններին համայնքների բյուջեների նախագծերի նախապատրաստման և բյուջետային միջոցների արդյունավետ կառավարման հարցում:

Գյուղատնտեսություն և շրջակա միջավայրի պահպանություն

Հաշվետու ժամանակահատվածում գյուղատնտեսության ոլորտում տարածքային կառավարման մարմնի կողմից իրականացված աշխատանքներն ուղղված են եղել գյուղատնտեսության ինտենսիֆիկացմանը, արտադրողականության բարձրացմանը, հողային ռեսուրսների նպատակային և ջրային ռեսուրսների խնայողաբար և արդյունավետ օգտագործմանը, պարենային անվտանգության մակարդակի բարձրացմանը և անասնաբուծության և բուսաբուծության զարգացմանը:

Գյուղատնտեսություն. Արմավիրի մարզի վարչական տարածքում 96607.8 հեկտարը գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից 43993.95 հեկտարը 2024թ. օգտագործվել է գյուղատնտեսական արտադրության կազմակերպման մեջ, այդ թվում՝ 24410,3հա վարելահողեր, 6235,45հա խաղողի և 13348,2հա պտղատու այգիներ:

2024թ. մարզում հիմնվել են 572.25հա բազմամյա տնկարքներ, որից 546.05հա պտղատու, այդ թվում՝ 503.7 հա ինտենսիվ և 26.2հա խաղողի այգիներ:

2024թ. գյուղատնտեսական տարին սկսվել էր բարեհաջող և գրեթե բոլոր մշակաբույսերի գծով սպասվում էր բարձր բերք: Սակայն 2024թ. մայիս-հունիս ամիսներին տեղի ունեցած կարկտահարությունները և քամիները մեծ վնաս են պատճառել մարզի գյուղատնտեսական արտադրությանը, որի հետևանքով վնասվել են Մեծամոր, Արմավիր, Բաղրամյան և Խոյ համայնքների 38 բնակավայրերի 3992 հողօգտագործողներին պատկանող 5709.27հա հողատարածությունները՝ 30-100%-ով: Կարկտահարության ռիսկերը մեղմելու նպատակով մարզի 2131.78 հեկտար խաղողի և պտղի տարածությունները պատվել են հակակարկտային ցանցերով: Իրականացվել են մարզում

տեղակայված 239 հակակարկտային կայանների ապակոնսերվացման, լիցքավորման և առկա թերությունների վերացման աշխատանքներ:

2024թ. ընթացքում մարզի գյուղացիական տնտեսություններից մթերող կազմակերպությունները մթերել են 5550 տոննա պտուղ, 7127 տոննա բանջարեղեն և 72913 տոննա խաղող:

Մեծ աջակցություն է ցուցաբերվել առանձին տնտեսվարող սուբյեկտների և արտահանող կազմակերպությունների՝ գյուղատնտեսական մթերքների արտադրության և արտահանման գործում: Ներդրված ջանքերի շնորհիվ հնարավոր է դարձել մթերել խաղողի արտադրված ողջ բերքը:

Կազմակերպվել են համայնքներում առկա անասնագլխաքանակի համատարած հաշվառման աշխատանքներ, համաձայն որի՝ 2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ մարզում հաշվառվել են 55878 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներ, այդ թվում՝ 14927 կովեր, 137143 մանր եղջերավոր կենդանիներ, 18807 խոզեր և 1,306,652 թռչուններ:

Մարզում գործող 3 ջրօգտագործողների ընկերությունների հետ համատեղ ապահովվել է ոռոգման համակարգի սպասարկման, կառուցման ու վերականգնման, ոռոգման ջրի վարձավճարների գանձման ուղղությամբ իրականացված աշխատանքները: ՀՀ Արմավիրի մարզպետի համապատասխան որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից մշտադիտարկվել և կարգավորվել են տարաբնույթ նշանակության ջրատարների, մայր ջրանցքների և ջրամղիչ կայանների մաքրման և վերականգնման աշխատանքները, որի արդյունքում 232,5կմ միջտնտեսային, 4998,8կմ ներտնտեսային ցանցերը, 350 խորքային հորերը և 66 պոմպակայանները պատրաստ են եղել ջրամատակարարմանը:

Մարզում գործում են թվով 43 ջրավազաններ, որոնց տարողությունը կազմում է 1.959 մլն մետր խորանարդ, որոնց միջոցով 4503 հեկտարի վրա իրականացվում են կաթիլային ոռոգման աշխատանքներ:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մարզի 17099 ջրօգտագործողներին մատակարարվել է 261,7 մլն մետր խորանարդ ոռոգման ջուր 2,878 մլրդ դրամ հասույթով, որի դիմաց հաշվետու ժամանակահատվածում գանձվել է 1.886 մլրդ դրամ, կամ գանձման մակարդակը կազմել է 65.5%:

Ոռոգման ջրամատակարարման բարելավման ուղղությամբ մեծ ծավալի աշխատանքներ են իրականացվել 2024 թվականի ընթացքում պետություն-համայնք համագործակցության սուբվենցիոն ծրագրերի շրջաբնակներում, մասնավորապես՝ կառուցվել է Արաքս գյուղի 1.05կմ /25հա/ երկարությամբ ոռոգման համակարգը՝ 21.198 մլն դրամ, Առատաշեն գյուղի 1,1կմ /40հա/ ոռոգման ցանցը՝ 24.876 մլն դրամ, Լուսագյուղի 0,72կմ /35հա/ երկարությամբ ոռոգման ցանցը՝ 25.67 մլն դրամ և Քարակերտ գյուղում երկաթյա խողովակներով 0.936 կմ /50հա/ երկարությամբ ոռոգման ջրագիծը՝ 26.99 մլն դրամ արժեքով: Նշված աշխատանքները ոչ միայն բարելավելու են ջրամատակարարումը, այլ նաև զգալիորեն կրճատելու են համակարգում դեռևս գոյություն ունեցող մեծ կորուստները:

Ուսումնասիրվել և գույքագրվել են մարզի տարածքով հոսող Արաքս, Մեծամոր և Քասախ գետերի, ինչպես նաև հեղեղատարների հուների մաքրման և ափապատնեշների ամրացման նպատակով իրականացվելիք աշխատանքները:

Մարզպետի աշխատակազմի մշտական ուշադրության կենտրոնում է եղել հողերի մելիորատիվ վիճակի բարելավման, մարզում առկա 280կմ երկարությամբ բաց կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման և վերանորոգման աշխատանքները: Պետական բյուջեի միջոցների հաշվին 11 բնակավայրերում մաքրվել է 42.44 կմ երկարությամբ բաց դրենաժային ցանց:

Մշտադիտարկման արդյունքներով գարնանը և աշնանը մարզին հատկացվել է 1004.6 լիտր մկնասպան թունանյութ, որը բաշխվել է մարզի համայնքներին, որի արդյունքում 12557.5 հեկտարի վրա իրականացվել են պայքարի աշխատանքներ:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակիցների հետ համատեղ մարզպետի աշխատակազմի ոլորտային պատասխանատուները համայնքներում իրականացրել են գյուղատնտեսության ոլորտում գործող պետական աջակցության ծրագրերի իրազեկման աշխատանքներ:

2024թ. ընթացքում մարզում գյուղատնտեսության ոլորտում իրականացվող պետական աջակցության ծրագրերի շրջանակներում հիմնվել է 503,7հա ինտենսիվ այգի, շուրջ 22,24հա-ի վրա ներդրվել է ոռոգման արդիական համակարգ, կառուցվել է «խելացի անասնագոմ» 40-45 գլխի համար և 2140քմ–ի վրա ջերմատուն, լիզինգի աջակցության ծրագրերի շնորհիվ ձեռք է բերվել 243 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, որից 64-ը՝ տրակտորներ, գյուղատնտեսական հումքի մթերումների նպատակով բավարարվել է շահառուների կողմից ներկայացված 49 հայտ և կնքվել է 505 պայմանագիր: «Բուսաբուծության աջակցության» ծրագրի շրջանակում մարզի 3 համայնքների 6 բնակավայրերի թվով 7 շահառուների կողմից իրականացված 153,77հա գարու, առվույտի և եգիպտացորենի ցանքերի համար տրամադրվել է փոխհատուցում՝ 11,388,582 դրամ, իսկ համայնքներին՝ մշտադիտարկման համար՝ 341,656 դրամ գումար: Ծրագրի պահանջներին համապատասխան ցանքային տարածություններում իրականացվել է ընտրանքային մշտադիտարկում, որի արդյունքում ճշգրտումներ են իրականացվել ՀՀ կառավարության կողմից վճարվող գումարներում: Կազմված արձանագրությունները ներկայացվել են ՀՀ էկոնոմիկայի նախարարություն:

Մարզում կանաչապատ տարածքների ավելացման ուղղությամբ «Հայաստան ծառատունկ» ծրագրի միջոցով 2024թ. ընթացքում կազմակերպվել ու իրականացվել են շուրջ 8982 ծառերի և թփերի տնկումներ մարզի 35 բնակավայրերում՝ ավելի քան 9 հեկտար ընդհանուր մակերեսով:

Սևանա լճում սիգի ձվադրման ժամանակահատվածում՝ 2024թ. նոյեմբերի 25-ից մինչև 2025թ. հունվարի 20-ը ներառյալ, սիգ ձկան և ձկնկիթի վաճառքը մարզի տարածքում բացառելու նպատակով մարզպետի աշխատակազմի ոլորտային պատասխանատուներն ինչպես առանձին, այնպես էլ համատեղ՝ ոստիկանության, բնապահպանության և ընդերքի, սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինների և համայնքների ներկայացուցիչների մասնակցությամբ, իրականացրել են ստուգայցեր:

Մարզի թվով 5 համայնքների 18 բնակավայրերում առկա են 38 ընդերքօգտագործող կազմակերպություններ՝ ավազի, տուֆ քարի, բազալտի արդյունահանման նպատակով, որոնցից ներկա պահին գործում է 18-ը:

Մարզի համայնքներում ընդերքօգտագործման և շահագործման կանոնների պահպանման և փաստաթղթերի օրինականության պահպանման ուղղությամբ մարզպետի աշխատակազմի ոլորտային պատասխանատուների կողմից կատարվել են մշտական այցելություններ և ուսումնասիրություններ:

Քաղաքաշինություն, հողաշինություն և ենթակառուցվածքների կառավարում

Քաղաքաշինություն. Հաշվետու ժամանակահատվածում քաղաքաշինության և, մասնավորապես շինարարության ոլորտը, մարզի տնտեսության առավել դինամիկ զարգացումն արձանագրող բնագավառն է եղել: Իրատեսորեն գնահատելով քաղաքաշինության բնագավառում առկա իրավիճակը, մարտահրավերները, դրանք դիտարկվել են մարզի մրցունակության բարձրացման, տարածքների զարգացման, առկա անհամամասնությունների հաղթահարման, ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորման, աշխատատեղերի ստեղծման, հասարակության բոլոր խմբերի համար սոցիալական, ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության, պատմամշակութային ժառանգության պահպանման և շրջակա միջավայրի վրա քաղաքաշինական գործունեության բացասական ազդեցությունների համատեքստում:

Հաշվետու ժամանակահատվածում մշտադիտարկման գործառույթներ են իրականացվել 2022-2024թթ. սուբվենցիոն ծրագրերով իրականացվող 115 օբյեկտներում: Ընդհանուր առմամբ 420 մշտադիտարկման այցելություններ են իրականացվել, որի արդյունքում 65 օբյեկտներում արձանագրվել են 95 թերություններ, որոնք հետագայում վերացվել են:

Մշտադիտարկվել են նաև Արմավիրի մարզում ՀՀ կառավարության կողմից պատվիրակված 6 մանկապարտեզների, 9 դպրոցների մարզադահլիճների կառուցման և վերակառուցման, ինչպես նաև ՀՏՋՀ կողմից կառուցվող թվով 4 դպրոցների շինարարական օբյեկտներում:

Ուսումնասիրվել և հսկողության է ենթարկվել շուրջ 670 քաղաքաշինական փաթեթ, որոնք վերաբերվել են հողահատկացման, ինքնակամ շինությունների օրինականացման գործընթացին, ճարտարապետահատակագծային առաջադրանքների նախագծերի համաձայնեցմանը, արդյունքում 192 փաթեթ ուղարկվել է համաձայնեցման ՀՀ քաղաքաշինության կոմիտե, համայնքներ լրամշակման է վերադարձվել 478 փաթեթ, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից դրական եզրակացություն է ստացել 58 փաթեթ, ընթացքի մեջ է գտնվում 7 գործ:

Կատարվել են ինքնակամ շինությունների հաշվառման, կասեցման գործառույթներ:

Ուսումնասիրվել են համայնքների կողմից ներկայացրած շուրջ 1675 շինարարական թույլտվությունների (շահագործման թույլտվություն) օրենսդրության համապատասխանությունը, անհրաժեշտության դեպքում կատարվել են այցելություններ՝ տեղում փաստացի ստուգման նպատակով, որի արդյունքում հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է 1675 շինարարական թույլտվություն:

Վերահսկողություն է իրականացվել համայնքների քաղաքաշինական գործընթացների, այդ թվում նաև անօրինական շինարարությունների կանխման, կասեցման և դրա հետևանքների վերացման ուղղությամբ:

Ճանապարհաշինություն. Հաշվետու ժամանկահատվածում մարզի տնտեսության զարգացման նախադրյալներից է եղել ճանապարհային ցանցի զարգացման միջոցով տնտեսական ներուժի և մարդկանց կենսամակարդակի բարձրացումը: Այս ուղղությամբ մարզպետի աշխատակազմը մարզի ճանապարհային ցանցի արդիականացման և որակի բարելավման ճանապարհով ձևավորել և զարգացրել է անվտանգ, ծախսարդյունավետ և էկոլոգիապես անվնաս ճանապարհային ցանց, որը կնպաստի միջմարզային, ներմարզային, համայնքային փոխադրումների աճին, նոր շուկաների ձևավորմանը, կխթանի ներքին և արտաքին առևտուրը, էական ազդեցություն կունենա մարզի և համայնքների, բնակավայրերի տնտեսական և սոցիալական կյանքի կայուն զարգացման վրա՝ մարզի և համայնքնեի բնակչության համար ապահովելով հաղորդակցությունը կենսական նշանակության օբյեկտների և մարզկենտրոնի հետ, կնպաստի տարածքային համաչափ զարգացմանը:

Արմավիրի մարզի ավտոմոբիլային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 602.1կմ, այդ թվում՝ միջպետական նշանակության՝ 90.3կմ, հանրապետական նշանակության՝ 124.5կմ, մարզային (տեղական) նշանակության՝ 387.3կմ:

Արմավիրի մարզի մարզային նշանակության ավտոճանապարհների «Ճանապարհային ցանցի բարելավում» ծրագրի, «Մարզային նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայություններ» միջոցառման գծով ընթացիկ ամառային, ձմեռային պահպանման, գծանշման և նշանների տեղադրման աշխատանքների համար 2024 թվականին հատկացվել է 190 մլն դրամ բյուջետային լրացուցիչ ֆինանսավորում, այդ թվում՝ 100 մլն դրամը՝ 85.5կմ ամառային և 130.65կմ ձմեռային պահպանման, 90 մլն դրամը՝ գծանշման և նոր նշանների տեղադրման աշխատանքների համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հաշվետու ժամանակահատվածում հայտարարվել է գծանշման և ճանապարհային նշանների տարատեղման համար սխեմաների

ձեռքբերման հարցման ընթացակարգ՝ 9.6 մլն դրամով, որի արդյունքում հաղթող ճանաչված «Հայկ Սարգսյան» Ա/Ձ-ի հետ կնքվել է պայմանագիր:

Հայտարարվել է Արմավիրի մարզի մարզային (տեղական) նշանակության ճանապարհներին նշանանների (կանգնակների) տեղադրման աշխատանքների ընթացակարգ 3 չափաբաժնով՝ ընդհանուր 80.33 մլն դրամ ընդհանուր գումարով, որի արդյունքում 1-ին չափաբաժնով հաղթող է ճանաչվել «Գրիգորշին» ՍՊ ընկերությունը, 2-րդ չափաբաժնով՝ «Ռոուդ Մարկինգս» ՍՊ ընկերությունը, իսկ 3-րդ չափաբաժնով մրցույթը չի կայացել մասնակից չլինելու պատճառով:

Արմավիրի մարզի մարզային (տեղական) նշանակության ճանապարհներին նշանների (կանգնակների) տեղադրման աշխատանքների կատարումն ընթացքի մեջ է:

Արմավիրի մարզում 2024 թվականին իրականացվել է 51.72կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհների հիմնանորոգում, այդ թվում՝ սուբվենցիոն ծրագրերով՝ 15.6 կմ, ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ՝ 36.12 կմ:

Միասնական երթուղային ցանց. Արմավիրի մարզի գրեթե բոլոր համայնքները տրանսպորտային կապով կապված են մարզկենտրոնի հետ: Մարզի համայնքներից մարզկենտրոն գործում են 24 միկրոավտոբուսային և ավտոբուսային ներմարզային երթուղիներ, իսկ մարզի համայնքներից դեպի մայրաքաղաք գործում են 10 ավտոբուսային և միկրոավտոբուսային միջմարզային երթուղիներ:

2021թ. նոյեմբերին կայացած Արմավիրի մարզի միասնական երթուղային ցանցը սպասարկող օպերատորի ընտրության մրցույթի արդյունքում մարզի Վաղարշապատ տարածաշրջանի միասնական երթուղիների սպասարկման իրավունք է ստացել «Էջմիածնի ԲՈՒԱՏ» ԲԲ ընկերությունը՝ 10 տարի սպասարկման ժամկետով:

Հողաշինություն. Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների հաստատման նպատակով սահմանված կարգով կազմվել և ՀՀ քաղաքաշինության կոմիտե են ներկայացվել նպատակային նշանակության փոփոխության վերաբերյալ թվով 17 հողաշինական գործեր: Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից տրված 37 (137.9հա) դրական եզրակացությունները ներկայացվել են համայնքների ղեկավարներին՝ առաջարկելով սահմանված կարգով ընդունել ավագանու համապատասխան որոշումներ և կատարել պետական գրանցումներ:

Հսկողություն է իրականացվել մարզի համայնքներում հողամասերի նպատակային նշանակության փոփոխություն կատարելու հետևանքով կատարված աշխատանքների նկատմամբ: Իրականացվել է համայնքների վարչական սահմաններում գտնվող հողամասերի աճուրդային վաճառքի և վարձակալության տրամադրման վերաբերյալ տվյալների հավաքագրում, ամփոփում:

Սահմանված կարգով մարզի Արմավիր, Վաղարշապատ, Բաղրամյան, Մեծամոր, Խոյ և Արաքս համայնքների բնակավայրերի 450.1 հեկտար հողատարածքների վերաբերյալ տրվել են եզրակացություններ՝ բարձրարժեք հողատեսքերը ցածրարժեք հողատեսքերի փոխադրելու համար:

Մարզի Արաքս, Մեծամոր, Փարաքար համայնքներում իրականացվել են ուսումնասիրություններ համայնքներում գործող և չգործող ավազահանքերի վերաբերյալ և կազմվել են համապատասխան ակտեր, որի արդյունքում Փարաքար և Արաքս համայնքներում գործող թվով 3 արդյունահանող ընկերության գործունեություն դադարեցվել է՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ընթացք տալու նպատակով:

Կրթություն, մշակույթ և սպորտ

Կրթություն. Հաշվետու ժամանակահատվածում գերակա խնդիր է եղել կրթության զարգացումը: Մարզային մակարդակում կրթության համար առանցքային է եղել ներառական կրթական միջավայրի ստեղծումը, կրթության բովանդակության և ծրագրերի, անհրաժեշտ ենթակառուցվածքների արդիականացումը և վերազինումը, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառումը ուսուցման և կառավարման համակարգերում:

Հաշվետու ժամանակահատվածում մարզում գործել է 119 հանրակրթական ուսումնական հաստատություն՝ 25 քաղաքային և 94 գյուղական դպրոցներ: Այդ թվում՝ մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող 111 հանրակրթական դպրոց, որից 92-ը՝ միջնակարգ, 19-ը՝ հիմնական, նախակրթարան գործում է 59-ում, ԿԳՄՍ նախարարության ենթակայության 6 հանրակրթական ուսումնական հաստատություն, այդ թվում՝ 5 ավագ դպրոց, 1 ռազմամարզական վարժարան: Մարզում գործում են ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Էօրնեկեան հանրակրթական դպրոց» հանրակրթական ուսումնական հաստատություն պետական ոչ առևտրային կազմակերպություն և «Գրիգոր Լուսավորիչ» ոչ պետական կրթահամալիր, ինչպես նաև ԿԳՄՍ նախարարության ենթակայության միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ՝ 3 պետական քոլեջ և 1 արհեստագործական ուսումնարան:

2024-2025 ուսումնական տարում մարզի դպրոցների աշակերտների թիվը կազմել է՝ 37415, նախակրթարանի սաների թիվը՝ 1111: Գործող նախադպրոցական ուսումնական հաստատությունների թիվը՝ 69, երեխաների թիվը՝ 6360:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ աշխատանքները, մասնավորապես՝

ԼՂ-ից ՀՀ տեղափոխված երեխաների կրթության շարունակականության ապահովման և ուսումնական գործընթացից դուրս չթողնելու նպատակով երեխաներն ուղղորդվել են այն ուսումնական հաստատություններ, որտեղ եղել են լիցենզիայով ազատ տեղեր: Մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող դպրոցներում սովորում են 1529 երեխաներ:

Արմավիրի մարզից գնահատման և թեստավորման կենտրոնի dimord.am կայքում դիմում-հայտ է լրացրել 1087 դիմորդ, որից ընդունվել է 678 դիմորդ:

Մարզի 654 ուսուցիչներ հաղթահարել են կամավոր ատեստավորման շեմը և ընդգրկվել հավելավճարների տրամադման ծրագրում:

2023-2024 ուստարվա դպրոցականների առարկայական օլիմպիադաների տարածքային փուլին մասնակցած 4367 աշակերտից մարզային փուլին երաշխավորվել և մասնակցել է 1498 աշակերտ: Մարզային փուլի 1498 մասնակիցներից հանրապետական փուլին երաշխավորվել և մասնակցել են 503 աշակերտներ, որից 86-ը հաղթահարել են մարզային փուլը և անցել հանրապետական փուլ: 2024թ. անցկացված հանրապետական փուլի արդյունքներով Արմավիրի մարզի աշակերտները ստացել են 1-ին կարգի թվով 3, 2-րդ կարգի թվով 6, 3-րդ կարգի թվով 5 դիպլոմներ և 6 գովասանագրեր:

ԼՂ-ից բռնի տեղահանված ուսուցիչների աջակցության նպատակով ԿԳՄՍ նախարարության կողմից գործարկվել է kadrer.emis.am հարթակը, որտեղ այս պահին հասանելի են մարզի հանրակրթական դպրոցներում առկա ուսուցչի թափուր աշխատատեղեր: Մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող դպրոցներում դեկտեմբեր ամսվա դրությամբ ԼՂ-ից բռնի տեղահանված 55 ուսուցիչ է աշխատում, որից 53-ը՝ գործուղված, 2-ը՝ «Դասավանդի՛ր, Հայաստան» ծրագրով:

ՀՀ կառավարության և Ասիական զարգացման բանկի միջև իրականացվող դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակներում ընթանում են Մրգաշատի թիվ 1 միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքները, իսկ Փարաքարի միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքներն ավարտվել են: Մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող 3 դպրոցների (Փշատավան, Շահումյան, Արմավիրի թիվ 8) մարզահիլիճների վերակառուցման և 5 դպրոցների (Վաղարշապատի N 7, Արագած, Ջանֆիդա, Արմավիրի թիվ 6, Արտիմետ) մարզադահլիճների կառուցման և մարզադահլիճների նոր գույքի ստացման աշխատանքներն ավարտվել են, ավարտական փուլում է Սարդարապատի միջնակարգ դպրոցի մարզադահլիճի վերակառուցման ծրագիրը:

ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով թվով 8 դպրոցների անշարժ գույքը հանձնվել է ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեի տնօրինմանը:

«Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագրի շրջանակում մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող 88 հանրակրթական դպրոցներում հիմնվել և վերազինվել են նոր լաբորատորիաներ՝ ժամանակակից բնագիտական և ինժեներական լաբորատոր սարքավորումներով և գույքով, ինչպես նաև անհրաժեշտ համակարգչային սարքավորումներով: Իրականացվել են «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» ծրագրի շրջանակներում մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների բնագիտական և ինժեներական առարկաների (ֆիզիկա, քիմիա, աշխարհագրություն, կենսաբանություն և ՏՀՏ) ուսուցիչների վերապատրաստումներ:

Հուլիս-օգոստոս ամիսներին մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների տարրական դասարանների աշակերտներին բաշխվել է 94301 հատ դասագիրք:

Սահմանված կարգի համաձայն համապատասխան ուսումնական հաստատություններից և համայնքներից կազմվել են ուսումնական հաստատությունների խորհուրդների անվանական կազմերը, որի արդյունքում ձևավորվել է 22 միասնական և 1 առանձին խորհուրդ:

Մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող 111 ուսումնական հաստատություններից 86-ը տրամադրում է տաք սնունդ, իսկ 25-ը՝ չոր սնունդ: Ծրագրից օգտվում են տարրական դասարանների շուրջ 14920 աշակերտներ, նախակրթարանների՝ 1025 սաներ:

Մշակույթ և սպորտ. Մշակույթի բնագավառում տարածքային կառավարման մարմնի աշխատանքները նպատակաուղղված են եղել մարզում մշակույթի ներուժի մեծացմանը, մշակութային կյանքին հասարակության մասնակցության և ակտիվ հաղորդակցության ապահովմանը, արվեստի տարածման և ժառանգության պահպանման գործում համայնքների ներգրավմանը:

Կարևորելով բնակչության առողջ ապրելակերպի արմատավորումը՝ հաշվետու ժամանակահատվածում մարզպետի աշխատակազմի ջանքերն ուղղվել են ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով՝ բնակչության առողջության ամրապնդմանը, երկարակեցությանը, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ սերնդի դաստիարակմանը:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ աշխատանքները, մասնավորապես՝

«Ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում» ծրագրի շրջանակներում մարզի 12 երաժշտական և արվեստի դպրոցների 82 աշակերտների ՀՀ պետական բյուջեով հատկացվել է փոխհատուցում՝ 17,866,500 դրամ:

ԿԳՄՍ նախարարության «Քույր դպրոցներ» ծրագրի շրջանակներում կազմակերպվել են Արմավիրի մարզի և Երևան քաղաքի արվեստի և երաժշտական դպրոցների աշակերտների համատեղ համերգներ և ցուցահանդեսներ:

Հունվար-փետրվար ամիսներին կազմակերպվել են «ՀՀ Վարչապետի գավաթ» սիրողական սեղանի թենիսի մրցաշարի համայնքային և մարզային փուլերը 2 տարիքային խմբերով՝ 5-8-րդ և 9-12-րդ դասարանցիներ: Ապահովվել է մարզային փուլում 2 տարիքային խմբերի հաղթող թիմերի մասնակցությունը Չարենցավանում անցկացված հանրապետական եզրափակիչ փուլին:

Ապրիլ-մայիս ամիսներին կազմակերպվել է «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» դպրոցականների թիմային խճուղավազքի մարզային փուլը, որին մասնակցել են 31 հանրակրթական դպրոցների թիմեր՝ 217 մասնակից: Ապահովվել է մարզային փուլում հաղթող թիմի մասնակցությունը Դիլիջանում անցկացված հանրապետական եզրափակիչ փուլին:

Մարզի 48 հանրակրթական դպրոցների 480 աշակերտների համար ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ համատեղ կազմակերպվել է «Քո արվեստը դպրոցում» մշակութային ծրագիրը՝ հայտնի արվեստագետների մասնակցությամբ:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Դասարվեստ» կրթամշակութային ծրագրով մարզի 3 դպրոցներում կազմակերպվել է Հայաստանի ազգային պատկերասրահի լավագույն կերպարվեստի ցուցանմուշների ցուցադրություն:

Մարզի հանրակրթական դպրոցների 7-12-րդ դասարանների աշակերտների մասնակցությամբ կազմակերպվել են «Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 7-12-րդ դասարանների աշակերտների միջև սպարտակիադա» մարզական միջոցառման դպրոցական, համայնքային և մարզային փուլերը՝ 8 մարզաձևերից:

Մարզի 119 հանրակրթական դպրոցների բաժանվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հատկացված 620 հատ հեծանիվ, ապահովվել է մարզի 99 հանրակրթական դպրոցների 198 հեծանվորդների մասնակցությունը «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» խճուղային հեծանվավազքի սիրողական մրցաշարի Արմավիրի մարզային փուլին:

Կազմակերպվել և անցկացվել է ՀՀ Արմավիրի մարզի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների միջև մինի ֆուտբոլի առաջնություն՝ 20 թիմերի մասնակցությամբ:

Օգոստոսի 19-ին մարզի լողորդները մասնակցել են «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» լողի սիրողական մրցաշարին:

ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքում սեպտեմբերի 7-ին անցկացված «Մշակութային վերածնունդ» արվեստների և արհեստների փառատոնին ներկայացվել են մարզի 6 համայնքների տաղավարներ՝ մշակույթի, արվեստի գործերի ցուցադրությամբ, ինչպես նաև երգի-պարի համույթների ելույթներ:

Կազմակերպվել են նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի դպրոցական, տարածաշրջանային և մարզային փուլերը:

Սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին ՀՖՖ–ի հետ համատեղ կազմակերպվել են ֆուտբոլի դպրոցական առաջնության տարածքային և մարզային փուլերը, որին մասնակցել է 45 թիմ:

Ապահովվել է մարզի շուրջ 580 վազորդների մասնակցությունը «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» խճուղային կրոսավազքի սիրողական մրցաշարին:

Առողջապահության և սոցիալական ոլորտի հարցեր

Առողջապահության բնագավառ. Հաշվետու ժամանակահատվածում առողջապահության ոլորտի զարգացումը մարզպետի աշխատակազմի առաջնահերթություններից է եղել, ըստ այդմ ոլորտային պատասխանատուների նպատակադրումներն ուղղված են եղել անհատի հանրային առողջության պահպանմանն ու բարելավմանը՝ ապահովելով հուսալի, հասանելի, արդիական, բարձր որակի առողջապահական ծառայությունների մատուցում: Մարզի առողջապահական համակարգում գործում են 34 բուժհաստատություններ, որոնցից 4-ը՝ մարզպետի աշխատակազմի, 25-ը՝ համայնքային ենթակայության, 4-ը գործում են մասնավոր հիմունքներով, այդ թվում՝ «ԱՐՄ ՄԵԴ» բժշկական կենտրոն ՍՊԸ, «ՄԱՍՏԵՐ ՄԵԴ» ԲԿ ՍՊԸ, «ՄԱՍՏԵՐ ՖԱՐՄ» ԲԿ ՍՊԸ, «ԼՈՒՍԻ ԴԵՆՏ» ՍՊԸ ՄԱՐ ՄԵԴ պոլիկլինիկա: Առողջապահական համակարգում աշխատում են 430 բժիշկներ և 743 միջին բուժանձնակազմ:

2024թ. ընթացքում մարզպետի աշխատակազմի ենթակայության 4 բուժհաստատություններից «Արմավիրի ԲԿ» ՓԲԸ պետական պատվերը կազմել է 1,487,545,204 դրամ, «Էջմիածնի ԲԿ» ՓԲԸ պետական պատվերը՝ 1,342,463,345 դրամ, «Մեծամորի ԲԿ» ՓԲԸ պետական պատվերը՝ 339,966,708 դրամ, «Հիսուսի մանուկներ ԱԿ» ՓԲԸ պետական պատվերը՝ 101,473,278 դրամ:

2024թ. ընթացքում մարզպետի աշխատակազմի ենթակայության 4 բուժհաստատություններից «Արմավիրի ԲԿ» ՓԲԸ վճարովի ծառայությունները կազմել է 529,934,820 դրամ, «Էջմիածնի ԲԿ» ՓԲԸ վճարովի ծառայությունները՝ 631,140,419 դրամ, «Մեծամորի ԲԿ» ՓԲԸ վճարովի ծառայությունները՝ 47,883,106 դրամ, «Հիսուսի մանուկներ ԱԿ» ՓԲԸ վճարովի ծառայությունները՝ 14,479,800 դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում մարզում գրանցվել է 1348 ծնունդ, որից 631-ը՝ աղջիկ, 712-ը՝ տղա:

2024թ. տարբեր հիվանդությունների բուժման նպատակով կենտրոնացված գնմամբ և մարդասիրական ճանապարհով ստացվել և բուժհաստատություններին է բաշխվել 244,498,154 ՀՀ դրամ արժողության տարբեր դեղամիջոցներ, որից 121,726,525 դրամ արժողության հակադիաբետիկ դեղորայք՝ առողջության առաջնային պահպանման օղակում հաշվառված 11963 դիաբետով հիվանդների համար:

2024թ. մարզպետի աշխատակազմի ենթակայության առողջապահական հիմնարկներում աշխատավարձի պարտքեր չեն ձևավորվել:

Արմավիր ԲԿ-ի ինֆեկցիոն բաժանմունքի վերակառուցման աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են և բաժանմունքը հանձնվել է շահագործման: ՀՀ առողջապահության նախարարության ֆինանսավորմամբ ամբողջությամբ վերանորոգվում և վերազինվում է Էջմիածնի ԲԿ ՓԲԸ-ն: Նախատեսվում է նաև սկսել Արմավիր ԲԿ-ի պոլիկլինիկայի մասնաշենքի վերանորոգումը:

Պարբերաբար իրականացվել են սկրինինգային ծրագրեր, որի շրջանակներում մարզի բուժհաստատություններ են գործուղվել մի շարք բժիշկներ, որի արդյունքում բուժառուներին տրամադրվել է անվճար խորհրդատվություն, իսկ անհրաժեշտության դեպքում՝ իրականացվել են մի շարք հետազոտություններ: ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքում 2024թ. ապրիլի 25-ին ՀՀ ԱՆ հետ համատեղ իրականացվել են առողջ ապրելակերպի արշավներ՝ դպրոցականների, նրանց ծնողների, ինչպես նաև Վաղարշապատ համայնքի և մարզպետի աշխատակազմի ոլորտային պատասխանատուների մասնակցությամբ: Արշավների նպատակն է եղել քարոզել առողջ սննդի գաղափարը, ինչպես նաև տեղում մասնակիցների համար պատրաստվել է առողջ սնունդ: Արշավին ներգրավված են եղել նաև մարզի բուժհաստատությունները, որոնք իրականացրել են արյան զարկերակային ճնշման չափումներ, մարմնի զանգվածի ինդեքսի որոշում, արյան մեջ գլյուկոզայի չափումներ: Ծրագիրը եղել է շատ արդյունավետ և կրելու է շարունակական բնույթ:

2024թ. ընթացքում կազմակերպվել են մի շարք վերապատրաստումներ, որոնց ներգրավված է եղել մարզի բուժհաստատությունների ավագ և միջին բուժանձնակազմը, ինչն էլ նպաստել է մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների հետևողական կատարելագործմանը:

Սոցիալական պաշտպանության բնագավառ. Սոցիալական պաշտպանության բնագավառում տարածքային քաղաքականությունն ուղղված է եղել սոցիալական կարիքի գնահատման և դրան համաչափ սոցիալական աջակցություն տրամադրելու սկզբունքի իրականացմանը՝ խրախուսելով անձի սոցիալ-տնտեսական ակտիվացումը: Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և աղքատ ընտանիքների կարողությունների և հմտությունների զարգացման միջոցով, զբաղվածության և ինքնազբաղվածության միջոցների ապահովմամբ և աղքատության փուլային հաղթահարման մոդելների կիրառմամբ ընտանիքները դուրս են գալու աղքատությունից: Նախատեսվում է ավելի շատ ընտանիքների տրամադրել սոցիալական ծառայություններ՝ ավելացնելով ինքնաբավ, արժանապատիվ և սեփական վաստակն ունեցող ընտանիքների թիվը՝ հետզհետե վերացնելով նրանց կախվածությունը պետական աջակցությունից: Աշխատունակ յուրաքանչյուր քաղաքացու աշխատանքի քաջալերումը, խրախուսումը և այս նպատակով անձի հմտությունների ու հնարավորությունների զարգացումը պետության սոցիալական քաղաքականության առանցքն են:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է սոցիալապես անապահով 1214 ընտանիքների կարիքների գնահատում, որի արդյունքում «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով դրամական օգնություն է հատկացվել սոցիալապես անապահով 753 ընտանիքների:

ՀՀ կառավարության 06.12.2018թ. N 1419-Ն որոշմամբ հաստատված «Զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված /մահացած/ զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը» սահմանելու մասին կարգի

համաձայն՝ մարզպետի աշխատակազմում հաշվառվել է բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող 143 զինծառայողների ընտանիք, որից 44-ը՝ զոհված և 99-ը՝ հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիք: Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 2 զոհված և 2 հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքներ ստացել են բնակարանի գնման վկայագիր, որոնցով ձեռք են բերել բնակարան:

Զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրով ՀՀ Արմավիրի մարզում իրականացվում է «Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման» ծրագիրը: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 18.01.2024թ. N 15-Ա/1 հրամանով հաստատված ծրագրի տեղաբաշխման համաձայն՝ 2024 թվականին ՀՀ Արմավիրի մարզին հատկացվող ֆինանսական միջոցների չափը կազմել է 22934.0 հազ. դրամ՝ 91 ծրագրի համար, այդ թվում՝ Արմավիր՝ 9324.8.0 հազ. դրամ 37 ծրագրի, Բաղրամյան՝ 6048.5 հազ. դրամ 24 ծրագրի, Վաղարշապատ՝ 7560.7 հազ. դրամ 30 ծրագրի համար: Հաստատված կարգի համաձայն ՀՀ Արմավիրի մարզի համայնքներից հավաքագրվել և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն է ներկայացվել 572 հնարավոր շահառուների տվյալներ:

ՀՀ կառավարության 2022թ. մարտի 10-ի N283-Ն որոշման համաձայն ՀՀ մարզերում իրականացվել է 1988-1992թթ. Ադրբեջանից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովության ծրագիր, որի շահառու ճանաչված մարզի 15 ընտանիքներից հաշվետու ժամանակահատվածում բնակարանի գնման վկայագրի միջոցով 5 ընտանիքներ ձեռք են բերել բնակարան:

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանություն. Արմավիրի մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների հետ անցկացվել են հանդիպում-քննարկումներ՝ պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների հիմնահարցերի առնչությամբ: Համատեղ աշխատանքների արդյունքում ձեռնարկվել են հնարավոր բոլոր միջոցները՝ պարտադիր ուսուցումից դուրս մնացած թվով 10 աշակերտների ուսումնական պրոցեսում ընդգրկելու նպատակով:

ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Արմավիրի մարզային բաժիններից ստացվել է տեղեկատվություն՝ բռնություն իրականացրած, կանխարգելիչ հաշվառման մեջ գտնվող և փաստացիորեն հայտնի մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ, հանցագործության կատարման մեջ մեղադրվող, անչափահաս երեխաների վերաբերյալ՝ նրանց շրջանում համապատասխան աշխատանքներ կատարելու նպատակով:

Սկզբնական հաշվառման վերցված առանց ծնողական խնամքի մնացած 5 երեխայի անձնական գործերը ներկայացվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ կենտրոնացված հաշվառման: Մարզի բնակիչ հանդիսացող 5 քաղաքացիներ հաշվառվել են որպես որդեգրել ցանկացող անձինք և 1 երեխա հաշվառվել է որպես որդեգրման ենթակա երեխա: Խնամատար ընտանիքում տեղավորված 4 երեխաների ընտանիքների նկատմամբ իրականացվել է մշտադիտարկում: Մեկ խնամատար ծնողի հետ կնքված պայմանագիրը դադարել է հոգեզավակի 18-ը լրանալու հիմքով: Նույն անձի հետ կնքվել է մասնագիտացված խնամատարության նոր պայմանագիր, որտեղ հոգեզավակը մեկն է: Համագործակցելով Արմավիր համայնքի խնամակալության և հոգաբարձության, ինչպես նաև Արմավիր ՏԿԵ-ն հետ՝ ապահովվել է փաստացի առանց ծնողական խնամքի մնացած 6 անչափահաս երեխաների տեղափոխումը «Շիրակի մարզի ընտանիքի և երեխայի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ: Առանց ծնողական խնամքի մնացած 1 երեխա տեղափոխվել է «Երևանի Մարի Իզմիրլյանի անվան» մանկատուն ՊՈԱԿ:

Համագործակցելով Հայ օգնության ֆոնդի հայաստանյան մասնաճյուղի հետ՝ իրականացվել են մարզի թվով 20 ծնողազուրկ և Արցախյան 44-օրյա պատերազմում զոհված ընտանիքների երեխաների հանգիստը Հանքավանի «Արագած» ճամբարում կազմակերպելու աշխատանքները: Մանկական առողջարարական ճամբար մեկնող՝ զոհված, հաշմանդամություն ձեռք բերած կամ հաշմանդամություն

ունեցող զինծառայողների և աշխարհազորայինների, ծնողազուրկ ու ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված բազմազավակ (4 և ավելի երեխա ունեցող) ընտանիքների 7-13 տարեկան թվով 200 երեխաների հանգիստը Հանքավանի «Հասմիկ» ճամբարում:

«Աստղիկ» բարեգործական հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում ձեռք են բերվել 3մլն դրամ ընդհանուր արժեքով 10000 դրամ արժողության սպառողական քարտեր, որոնք տրամադրվել են մարզի սոցիալապես անապահով ընտանիքներին:

Համագործակցելով Հայաստանում Հունգարիայի դեսպանատան հետ՝ կազմակերպել է մարզի շուրջ 72 արցախցի 7-14 տարեկան երեխաների 4-օրյա հանգիստը Հունգարիայի Զանկայի էրժեբեթ ճամբարում:

Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, համայնքային ծառայության և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեությանն առնչվող հարցեր

Հաշվետու ժամանակահատվածում մարզպետի աշխատակազմը շարունակել է ջանքեր գործադրել տարածքային զարգացման գործընթացներում տարածքային ու տեղական գերակայությունների շուրջ սոցիալ-տնտեսական զարգացման և ամուր համագործակցության ձևավորմանը, տարածքային և համայնքային դերակատարների կարիքների գնահատման ու կարողությունների հզորացմանը:

Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության և փոխհամաձայնեցված համագործակցության արդյունավետության ապահովման շրջանակներում բացահայտվել են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության ընթացքում առաջացած խնդիրները, մշակվել են համապատասխան առաջարկություններ այդ խնդիրները վերացնելու ուղղությամբ:

Մշտական կապի մեջ լինելով մարզի տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ նրանց տրամադրվել է անհրաժեշտ խորհրդատվություն՝ իրենց սեփական և պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման հարցերով, ինչպես նաև վերահսկվել է պետության կողմից համայնքներին պատվիրակված լիազորությունների կատարման ընթացքը և պարտադիր լիազորությունների կատարումը: Շարունակաբար իրավական հսկողություն է իրականացվել մարզի համայնքների ավագանու նիստերի հրավիրման պարբերականության, ավագանու և համայնքների ղեկավարների որոշումները սահմանված կարգով մարզպետի աշխատակազմ ներկայացնելու նկատմամբ և դրանց համապատասխանությունը գործող օրենսդրությանը: Ընդունված որոշումների թիվը 1076 է: 2024 թվականի ընթացքում անցկացվել է 98 ավագանու նիստ, որից 59-ը՝ հերթական, 39-ը՝ արտահերթ: Իրականացվել է նաև համայնքների ղեկավարների կողմից ընդունված թվով 11214 որոշումների վերլուծություն:

Մարզի համայնքապետարանների հետ համագործակցելով՝ իրականացվել են թվով 581 համայնքային ծառայողների Ձև 1 և Ձև 2 գրանցամատյանների վարման նոր տվյալների մուտքագրման, տեղեկատվության թարմացման աշխատանքներ:

Համայնքային ծառայության 83 հայտարարված մրցույթներից կայացել է 70-ը, 13 մրցույթ չի կայացել՝ դիմորդ չլինելու պատճառով: ՀՈԱԿ տնօրենների 22 հայտարարված մրցույթներից կայացել է 16-ը, 6 մրցույթ չի կայացել՝ դիմորդ չլինելու պատճառով:

Ապահովվել է մարզի համայնքների ավագանու անդամների վերապատրաստման դասընթացների մասնակցությունը, որն անցկացվել է Հայաստանի պետական կառավարման ակադեմիայում: Նախատեսված 169 ավագանիներից վերապատրաստման դասընթացին մասնակցել են 105 ավագանիներ: Մարզպետի աշխատակազմում կազմակերպվել է համայնքների ավագանիների, համայնքի ղեկավարների և համայնքների ղեկավարների տեղակալների թվով 50 մասնակիցների վերապատրաստում, որոնց մասնակցել և վկայական են ստացել 40-ը:

Ապահովվել է Արմավիրի մարզպետի աշխատակազմի վարչական շենքում ՀՀ ՏԿԵ նախարարության և Հայաստանի պետական կառավարման ակադեմիայի կողմից կազմակերպվող թվով 140 համայնքային ծառայողների վերապատրաստման դասընթացների իրականացումը, մասնակցել և վկայականներ են ստացել 139 համայնքային ծառայողներ:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից մարզի Արմավիր, Վաղարշապատ, Արաքս և Ֆերիկ համայնքների աշխատակազմերում կադրային գործի վարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու ժամանակ արձանագրված թերությունների վերացման նպատակով համայնքներին ցուցաբերվել է մեթոդական խորհրդատվություն:

Աջակցություն է ցուցաբերվել եկամուտների հայտարարագրման մասին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին ծանուցելու գործընթացին:

Հավաքագրվել և յուրաքանչյուր ամիս ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել մարզի աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտի եկամուտների և ծախսերի վերաբերյալ հաշվետվություն, եռամսյա պարբերականությամբ՝ մինչև 50 միկրոն հաստությամբ պոլիէթիլային տոպրակների վաճառքի արգելանքի հսկողական գործառույթների և յուրաքանչյուր տասնօրյակ՝ մարզի հնամաշ թափքերի, որպես մետաղի ջարդոն հանձնելու գործընթացի վերաբերյալ տեղեկատվություն:

Մարզի համայնքներից հավաքագրվել, կազմվել և Ներքին գործերի նախարարության «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» է ներկայացվել արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության հիմնահարցերով վերապատրաստման 2024 թվականի ունկնդիրների պլան-գրաֆիկը:

Վարչատարածքային բարեփոխումների արդյունքում ձևավորված բազմաբնակավայր թվով 7 համայնքներում և 1 չմիավորված համայնքում «մեկ պատուհան» սկզբունքով լիարժեք գործում է կառավարման տեղեկատվական համակարգը:

Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ են իրականացվել բնակչության առողջության և շրջակա միջավայրի վրա կենցաղային կոշտ թափոնների վտանգավոր ներգործության նվազեցման ուղղությամբ: Մարզի ողջ տարածքում իրականացվել են գոյացող աղբի պատշաճ կերպով հավաքման, ինչպես նաև աղբի առաջացման կանխարգելմանն ուղղված միջոցառումներ:

Զորահավաքային նախապատրաստություն

Կազմակերպվել և համակարգվել են մարզի և աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության աշխատանքները:

Համագործակցելով ՀՀ ՊՆ ՀԶԿ Արմավիրի զինվորական կոմիսարիատի և տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ ապահովվել է զորահավաքային նախապատրաստության, զորահավաքային ռեսուրսների ուսումնասիրման և ճշգրտման աշխատանքների օժանդակությունը: Տարվել է աշխատակազմի զինապարտ աշխատակիցների հաշվառում և ամրագրում: Սահմանված կարգով վարվել են առկա գրանցամատյանները: ՀՀ կառավարության որոշումների համաձայն կազմակերպվել են վարժական հավաքներում ընդգրկված մարզի զինապարտ քաղաքացիների ծանուցման աշխատանքները: Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչերի ընթացքում նախապատրաստվել են մարզային զորակոչային հանձնաժողովի նիստերը և ապահովվել է հանձնաժողովի աշխատանքներին մասնակցությունը: Մարզի համայնքների, վարչական ղեկավարների, դպրոցների տնօրենների, զինղեկների, ավագ դասարանների աշակերտների մասնակցությամբ կազմակերպվել և անցկացվել են հավաք խորհրդակցություններ՝ «ՀՀ ՊՆ ռազմաուսումնական հաստատություններում դիմորդների գրավչության բարձրացման» թեմայով:

ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության հետ համատեղ լրամշակվել և հաստատման են ներկայացվել ոլորտին վերաբերելի մի շարք պլաններ:

Նախապատրաստվել և անցկացվել են հրամանատարաշտաբային, շտաբային ուսումնավարժանքներ, դասախոսություններ, պատսպարման վայրերի ուսումնասիրություններ, ոլորտին առնչվող այլ հարցեր:

Մարզպետի աշխատակազմի գործունեության կազմակերպման ընդհանուր հարցեր

Հաշվետու ժամանակահատվածում արդյունավետ աշխատանքներ են կատարվել մարզպետի աշխատակազմում անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության, հասարակայնության հետ կապերի, ինչպես նաև վարչատնտեսական գործառույթներ իրականացնելու ուղղությամբ:

Փաստաթղթաշրջանառություն. Ներքին գործավարության վարման, փաստաթղթերի ընդունման, օպերատիվ հաշվառման և տնօրինման միասնական համակարգի պահպանման արդյունքում հաշվետու ժամանակահատվածում մուտքագրվել է ընդհանուր քանակով 25546 և առաքվել 9615 փաստաթուղթ, տարաբնույթ հարցերի կապակցությամբ ընդունվել են մարզպետի 638 որոշումներ:

Մարզպետի աշխատակազմում ստացվել են քաղաքացիների ընդհանուր թվով շուրջ 1750 տարաբնույթ դիմումներ, առաջարկություններ և բողոքներ, որոնց գերակշիռ մասին օրենսդրությամբ սահմանված կարգով տրվել են համապատասխան լուծումներ: Նշված 1750 նամակներից 1065-ը եղել է դրամական աջակցության խնդրանքով, որոնցից 753-ը ստացել են դրական լուծումներ:

Մարզպետի աշխատակազմում, ինչպես նաև մարզի մի շարք համայնքապետարաններում (Փարաքարի, Բաղրամյանի, Վաղարշապատի և Խոյի) մարզպետի մոտ կազմակերպված ընդունելություններին գրանցված 122 քաղաքացիներից ընդունելություններին մասնակցել են 108 քաղաքացիներ (հերթագրված 14 քաղաքացիներ չեն ներկայացել ընդունելություններին), որոնց կողմից բարձրացված հարցադրումներից դրական լուծում են ստացել 74-ը, չի բավարարվել և օրենսդրությանը համապատասխան սպառիչ պարզաբանումներ են ստացել 27-ը, ընթացքի մեջ է 7-ը:

Կայացել և արձանագրվել են ՀՀ Արմավիրի մարզի խորհրդի 4 նիստեր և 6 խորհրդակցություններ:

Արդյունավետ աշխատանքներ են կատարվել նաև մարզպետի աշխատակազմում վարչատնտեսական գործառույթների՝ մարզպետի աշխատակազմի կարիքների համար 2024 թվականի պետական բյուջեով նախատեսված և համապատասխան ծախսային ծրագրերի իրականացման նպատակով գնվելիք ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանացանկում ընդգրկված ապրանքանյութական արժեքների ձեռքբերման, հաշվառման, մարզպետի աշխատակազմին ամրացված անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների պաշտպանության և այդ գույքի արդյունավետ օգտագործմանն ուղղված միջոցառումների, մարզպետի աշխատակազմի վարչական շենքի կոմունալ ծառայությունների տեխնիկական, ինչպես նաև տրանսպորտային սպասարկման ապահովման իրականացման ուղղությամբ:

Շարունակական աշխատանքներ են տարվում նաև մարզպետի աշխատակազմում առկա արխիվային փաստաթղթերի ընթացիկ մշակման, արխիվային ֆոնդի գործերի և համապատասխան փաստաթղթերի սահմանված կարգով մարզպետի աշխատակազմի արխիվ հանձնման, ընդունման, հաշվառման, պահպանման, մատչելիության ապահովման և հետագայում պետական արխիվային պահպանության հանձնելու ուղղությամբ:

Անձնակազմի կառավարում. 2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի հաստիքային միավորների թիվը եղել է 96, քաղաքացիական ծառայողների հաստիքների թիվը՝ 75: ՀՀ վարչապետի 2023 թվականի հոկտեմբերի 29-ի N 1080-Ա որոշման համաձայն իրականացվել է ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի հաստիքների կրճատում, որի արդյունքում հաստիքային միավորների թիվը պակասել է 15-ով, դառնալով՝ 81, իսկ քաղաքացիական ծառայության հաստիքների թվաքանակը պակասել է 15-ով՝ դառնալով 61:

Սահմանված կարգով իրականացվել է ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի հաստիքների կրճատման գործընթաց, որի արդյունքում կրճատվել է քաղաքացիական ծառայության 5 թափուր պաշտոն, պաշտոնից ազատվել և քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցվել են 10 քաղաքացիական ծառայողներ:

Հաշվետու ժամանակահատվածում քաղաքացիական ծառայության 11 պաշտոն համալրելու նպատակով աշխատակազմում հայտարարվել է 14 մրցույթ, այդ թվում՝ 12 արտաքին և 2 ներքին:

Օրենսդրությամբ սահմանված կարգով 2024թ. ընթացքում իրականացվել են համապատասխան վերապատրաստման դասընթացներ:

ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմում իրականացվել է 1 ծառայողական քննություն:

Պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի և վարչատնտեսական մասի համակարգողի թափուր պաշտոններն զբաղեցնելու համար հաշվետու ժամանակահատվածում՝ համաձայն 2023 թվականին ուժի մեջ մտած նոր կարգի, հայտարարվել են համապատասխանաբար՝ 190 և 279 մրցույթներ (ընդհանուր թվով՝ 469): Մրցույթների արդյունքում պաշտոնի է նշանակվել՝ 1 տնօրեն և 19 վարչատնտեսական մասի համակարգող:

Տեղեկատվության և հասարակայնության հետ կապեր. Ակտիվ աշխատանքներ են տարվել մարզի տեղեկատվական քաղաքականության իրականացման և մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքի վարման ուղղությամբ:

Ապահովվել է Արմավիրի մարզպետի, մարզպետի աշխատակազմի գործունեության վերաբերյալ հասարակության իրազեկումը մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքի, ֆեյսբուքյան էջի, ինչպես նաև ԶԼՄ հարթակներով տարածելու միջոցով: Առանձին դեպքերում ապահովվել է նաև համայնքապետարաններին և մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող կրթական ու առողջապահական հաստատություններին վերաբերող տեղեկությունների լուսաբանումը:

Իրավական հարցեր

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են աշխատանքներ մարզի տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքների ավագանիների և համայնքների ղեկավարների կողմից ընդունված իրավական ակտերի ուսումնասիրության ուղղությամբ, որոնց արդյունքում ոչ միայն պարզաբանվել, այլև ցուցաբերվել է իրավական աջակցություն:

Ընդհանուր օրենսդրական տեխնիկայի կանոնների կիրառման, այդ թվում նաև իրավակիրառ պրակտիկայի իրազեկման ուղղությամբ պարբերաբար մարզի համայնքներ, մարզպետի աշխատակազմի ենթակայության հանրակրթական ուսումնական, ինչպես նաև բժշկական հաստատություններ են ներկայացվել մեթոդական շրջաբերական գրություններ:

Իրականացվել է ամենօրյա աշխատանքներ մարզի համայնքապետարանների համապատասխան աշխատակազմերի քարտուղարների հետ՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված օրենսդրական տեխնիկայի կանոնների ուսուցման, պարզաբանման և կիրառման, ինչպես նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավասությունների ուղղությամբ:

Վերահսկողություն է իրականացվել հողային օրենսդրության շրջանակներում համայնքների ղեկավարների կողմից հողերի օտարման՝ աճուրդային կարգով իրացման և վարձակալության տրամադրման գործընթացի նկատմամբ:

Իրավական վերահսկողություն է իրականացվել համայնքների ղեկավարների և ավագանիների կողմից ընդունված իրավական ակտերի նկատմամբ:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի սեպտեմբերի 25-ի N 2263-Ա հրամանով հաստատված աշխատանքային ծրագրի համաձայն՝ իրավական հսկողություն է իրականացվել 1-ին եռամսյակում մարզի Բաղրամյան, 2-րդ եռամսյակում՝ Փարաքար, իսկ 4-րդ եռամսյակում՝ Վաղարշապատ համայնքներում:

Ինչպես նախորդ, այնպես էլ 2024 թվականի ընթացքում դատական մարմիններում, մարզպետի աշխատակազմը որպես պատասխանող կողմ, ներկայացված է եղել թվով 9 դատական գործերի քննությանը (քաղաքացիական և վարչական գործեր, որոնցից 2-ը՝ բողոքարկման փուլում է, վարչական գործերից 2024 թվականի հունիսի 1-ի դրությամբ թվով 4-ը՝ մարզպետի աշխատակազմի նախկին աշխատակիցներ):

Մարզպետի աշխատակազմը հանդես է եկել օրենսդրական նախաձեռնությամբ, համաձայն որի՝ 2024 թվականի հունվարի 26-ին և նոյեմբերի 19-ին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն են ներկայացվել ՀՀ կառավարության որոշումների նախագծեր, որոնցից առաջինը ընդունվել է ՀՀ կառավարության կողմից 2024 թվականի մայիսի 16-ի N707-Ա որոշմամբ (Վաղարշապատ համայնքին նվիրաբերված աղբատար մեքենաներ և աղբարկղեր) իսկ երկրորդ նախագիծն ընթացքի մեջ է («Մեծամորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի վիրաբուժական բաժանմունքի փակում):

2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ Արմավիրի մարզպետի կողմից ընդունված թվով 636 որոշումների նկատմամբ «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջի համաձայն իրավական հսկողություն է իրականացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից, որի արդյունքում դրանք գնահատվել են իրավաչափ: